ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8214

07 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 98 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 96բ տան բնակիչ Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ «Վաղարշապատ» նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 31.07.2013թ. հաստատված թիվ 4515, 4516 և 4517 սեղանամատյաններով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագիր/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 98 հասցեում գտնվող 0.0595հա մակերեսով հողամասից 0.0018հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից բնակելի կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21.07.2025թ. թիվ Կ-21072025-04-0062 որոշումը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 25.07.2025թ. թիվ ԱՏ-25072025-04-0525 տեղեկանքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 98 հասցեում գտնվող 0.0595հա մակերեսով հողամասից 0.0018հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8224

07 մայիսի 2025թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ԺՈՐԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն. Դարբինյան /նախկին Կոմունարների/ փողոցի թիվ 7 տան բնակիչ Լևոն Ժորայի Պողոսյանի դիմումը՝ պարզվել է, որ.
- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 02.09.2022թ. հաստատված 6763 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 30.04.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն. Դարբինյան /նախկին Կոմունարների/ փողոցի 2-րդ փակուղու թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Լևոն Ժորայի Պողոսյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.01005հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություն,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին Ն. Դարբինյան /նախկին Կոմունարների/ փողոցի 2-րդ փակուղու թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.01005 հա մակերեսով հողամասը համարել Լևոն Ժորայի Պողոսյանի / ծնված՝ 03.09.1966թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8234Ա

07 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 18.07.2025Թ. ԹԻՎ 3044 ՔԱՂՎԱԾՔԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ, 64-րդ և 65-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի և նույն օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անվավեր ճանաչել Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 18.07.2025թ. թիվ 3044 քաղվածքը և տեղեկանքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 854-Ա

08 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՎՈՐԳ ՎԵՄԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դ. Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 30 տան բնակիչ Գևորգ Վեմիրի Հովհաննիսյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 22.12.1991թ. տրված տեխնիկական անձնագիր և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 18.06.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դ. Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 30 հասցեում գտնվող 0.0834հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դ. Անհաղթի /նախկին Օրջոնիկիձե/ փողոցի թիվ 30 հասցեում գտնվող 0.0834հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Գևորգ Վեմիրի Հովհաննիսյանի /ծնված՝ 06.04.1964թ./ սեփականությունը:
2. 61,1 քմ մակերեսով խնանութը համարել ինքնակամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ... РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ... REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHAR...

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 825-Ա

08 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 6/2 տան բնակիչ Համեստ Նահապետի Թութոյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 06.09.2012թ. տրված թիվ 30062025-04-0057 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 02.07.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023GBSDMR/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 6/2 հասցեում գտնվող 0.08հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 143քմ /արտաքին 143քմ, ներքին 95.2քմ/ մակերեսով բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 6/2 հասցեում գտնվող 0.08հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 143քմ /արտաքին 143քմ, ներքին 95.2քմ/ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 172 887 /հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2. 85.2քմ մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել ինքնակամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8064

08 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ԹԻՎ 57 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նաիրա Մարտիրոսյանի լիազորված անձ Աշոտ Վոլոդյայի Ասլանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ Նաիրա Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 20.06.1998թ. տրված թիվ 025039 սեփականության իրավունքի վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 3-րդ փակուղու թիվ 57 հասցեում գտնվող 0.065հա մակերեսով հողամասից 0.002հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից բնակելի կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 31.07.2025թ. թիվ Կ-31072025-04-0061 որոշումը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 10.07.2025թ. թիվ ԱՏ-10072025-04-0668 տեղեկանքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 3-րդ փակուղու թիվ 57 հասցեում գտնվող 0.065հա մակերեսով հողամասից 0.002հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 827Ա

08 օգոստոսի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տարոնիկ գյուղի Գ. Գառնիկյան փողոցի թիվ 25 տան բնակիչ Կարապետ Հովհաննեսի Միրզախանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին Պետտնկարան/ թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 08.04.2025թ. տրված՝ թիվ Ամ-517 արխիվային քաղվածք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 01.07.2025թ. հաստատված թիվ 5116, 5117 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011Y4Z3DRX/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս, 1-ին փողոց, թիվ 44 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 828Ա

08 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան դիմել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տարոնիկ գյուղի Գ.Գառնիկյան փողոցի թիվ 25 տան բնակիչ Կարապետ Հովհաննեսի Միրզախանյանը իրեն, Անահիտ Միհրանի Երանյանին և Հովհաննես Կարապետի Միրզախանյանին պատկանող /հիմք՝ «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 08.04.2025թ. տրված N Ամ-517 արխիվային քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող առաջին տեղակալի կողմից 09.06.2025թ. տրված թիվ 2425 քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող առաջին տեղակալի կողմից 09.06.2025թ. տրված թիվ 2425 տեղեկանք և «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 15.07.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին Պետ.Տնկարան/ թաղամասի տարածքում գտնվող, /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1077-0005/, 2.1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող հողատեսքի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին Պետ.Տնկարան/ թաղամասի տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-1077-0005/, 2.1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ 5-րդ կարգի վարելահող հողատեսքի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ